ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**.

   Տիգրան Պետրոսյան – Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները**.

   Վրաստանի (Թբիլիսի), 2026 թվականի նոյեմբերի 5-6-ը:

3. **Հրավիրող կողմը**.

   Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարության պարենի ազգային գործակալություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**.

   Սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության ոլորտներում երկկողմ համագործակցության ընթացիկ հարցերի, առկա խնդիրների և դրանց կարգավորման հնարավոր ուղիների քննարկումը:

5. **Քննարկված թեմաները (հարցերը)՝**

   - ✓ Հայաստանից Վրաստան դեղձի և խաղողի արտահանման ընթացքում առաջացած սահմանափակումներն ու դրանց հաղթահարման հնարավորությունները,
   - ✓ Հայաստանից Վրաստան ձկնամթերքի արտահանման և տարանցիկ փոխադրումների հետ կապված հարցերը,
   - ✓ Բուսասանիտարիայի և անասնաբուժության ոլորտներում երկկողմ համագործակցության խորացմանն առնչվող հարցերը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Տ. Պետրոսյանը բարձրացրել է Հայաստանից Վրաստան դեղձի և խաղողի արտահանման ընթացքում առաջացած խոչընդոտների հարցը՝ հաշվի առնելով վրացական կողմից կիրառված սահմանափակումների պատճառները: Նաև ընդգծել է խնդրի կարգավորման կարևորությունը՝ հատկապես հաշվի առնելով հայկական գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ ռուսական կողմից կիրառված սահմանափակումները:

Ի պատասխան հարցադրումներին՝ Գ. Իակոբաշվիլին տեղեկացրել է, որ արձանագրվել են դեպքեր, երբ հայկական արտադրանքը Վրաստան ներմուծելուց հետո տնտեսավարողները փոխել են դրա բուսասանիտարական հավաստագրերը և այն վերաարտահանել Ռուսաստան՝ որպես վրացական ծագման արտադրանք: Նրա խոսքով՝ ռուսական կողմը մտահոգություն է հայտնել Վրաստանից համապատասխան ապրանքատեսակների արտահանման ծավալների զգալի աճի կապակցությամբ: Վրացական կողմի իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ արտահանման աճը համադրելի է Հայաստանից Վրաստան ներմուծված նույն ապրանքատեսակների ծավալների հետ: Այդ կապակցությամբ ռուսական կողմը նախազգուշացրել է նաև վրացական արտադրանքի ներմուծման հնարավոր արգելքի մասին:

Գ. Իակոբաշվիլին նշել է, որ վրացական կողմը ռուս գործընկերներին խնդրել է ժամանակավորապես թույլատրել արդեն իսկ սառնարանային պահեստներում գտնվող արտադրանքի արտահանումը, որից հետո սահմանափակել է Հայաստանից համապատասխան ապրանքատեսակների ներմուծումը: Հավելել է, որ դեղձի և խաղողի արտահանման սեզոնն արդեն ավարտվել է՝ առաջարկելով համատեղ աշխատանքներ իրականացնել հաջորդ տարի նմանատիպ իրավիճակները կանխելու նպատակով:

Տ. Պետրոսյանն իր հերթին ընդգծել է, որ խաղողի արտահանման սեզոնը դեռևս ավարտված չէ և սառնարանային պահեստներում առկա են խաղողի զգալի ծավալներ, որոնք նախատեսված են Ամանորի նախաշեմին, ինչպես նաև դրան հաջորդող ժամանակահատվածում արտահանման համար: Այդ համատեքստում առաջարկել է հստակեցնել սահմանափակումների պատճառները և մշակել վերահսկողական

մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանխել հնարավոր չարաշահումները՝ միաժամանակ ապահովելով հայկական խաղողի արտահանման շարունակականությունը:

Գ. Իակոբաշվիլին հայտնել է, որ հարցը կքննարկի Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարի հետ, որից հետո հայկական կողմին կփոխանցվի համապատասխան դիրքորոշում՝ արտահանման կազմակերպման հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Հայկական կողմը բարձրացրել է նաև Հայաստանից Վրաստան ձկնամթերքի արտահանման ընթացքում առաջացող խոչընդոտների հարցը՝ հետաքրքրվելով դրանց պատճառներով և հնարավոր լուծումներով: Գ. Իակոբաշվիլին նշել է, որ ձկնամթերքի պարագայում ևս մտահոգություններ կան վերաարտահանման և ծագման փաստաթղթերի փոփոխման համանման մեխանիզմների հնարավոր կիրառման առնչությամբ: Միաժամանակ ընդգծել է, որ ներկայումս վրացական կողմը ձգտում է լրացուցիչ խոչընդոտներ չստեղծել հայկական ձկնամթերքի՝ Վրաստան արտահանման և երկրի տարածքով տարանցիկ փոխադրման համար:

Ի պատասխան՝ Տ. Պետրոսյանը տեղեկացրել է, որ հայկական և ռուսական կողմերի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հայկական ձկնամթերքի՝ Ռուսաստանի տարածքով տարանցիկ փոխադրումները թույլատրելու վերաբերյալ: Նշված պայմանավորվածության արդյունքում հայկական ձկնամթերքը հնարավորություն կունենա Ռուսաստանի տարածքով արտահանվել Բելառուս, Ղազախստան և ԵԱՏՄ այլ երկրներ:

Այս համատեքստում Տ. Պետրոսյանն ընդգծել է, որ վերոնշյալ պայմանավորվածությունը զգալիորեն նվազեցնում է վրացական կողմի մատնանշած հնարավոր չարաշահումների ռիսկերը, քանի որ հայկական ձկնամթերքի արտահանումը ԵԱՏՄ անդամ պետություններ հնարավոր կլինի իրականացնել Ռուսաստանի տարածքով՝ առանց Վրաստանի միջոցով ապրանքի ծագման վերաբերյալ փաստաթղթերի փոփոխման կամ վերաարտահանման սխեմաների կիրառման անհրաժեշտության:

Կողմերը քննարկելեն նաև բուսասանիտարական վերահսկողությանը, վնասատուների և մակաբույծների դեմ պայքարին, ինչպես նաև կենդանիների հիվանդությունների կանխարգելմանն առնչվող մի շարք մասնագիտական հարցեր:

Անդրադարձ է կատարվել երկու երկրներում կենդանիների պատվաստումների կազմակերպմանը, կիրառվող պատվաստանյութերին և անասնաբուժական կանխարգելիչ միջոցառումներին:

Կողմերը փոխանակվել են համապատասխան ոլորտներում կուտակված փորձով՝ կարևորելով մասնագիտական հաղորդակցության շարունակականությունը և գործնական համագործակցության խորացումը:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները.

- ✓ Վրացական կողմը կքննարկի Հայաստանից խաղողի արտահանման սահմանափակումների հարցը Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարի հետ և հայկական կողմին կտրամադրի համապատասխան դիրքորոշում:
- ✓ Կողմերը պատրաստակամություն են հայտնել համագործակցել՝ հաջորդ տարի գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ընթացքում նմանատիպ խնդիրների առաջացումը կանխելու նպատակով:
- ✓ Կողմերը կարևորել են բուսասանիտարիայի և անասնաբուժության ոլորտներում մասնագիտական տեղեկատվության փոխանակման և համագործակցության շարունակականությունը:

Հանդիպման արդյունքում առանձին փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

9. Ստորագրությունը, ամսաթիվը **11.11.2026թ.**

